ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 21-րդ գլխի (*սեփականության դեմ ուղղված հանցագործություններ*) համապատասխան հոդվածների վերլուծությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնել հետևյալը՝

1. զգալի չափը պարտադիր հատկանիշ է հափշտակության եղանակներից գողության թե՞ հասարակ, թե՞ որակյալ հանցակազմերի համար, ինչը պրակտիկ իրացման ընթացքում հանգեցնում է պատիժների անհամամասնությանը.

2. ի տարբերություն մի շարք արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումների՝ գրպանահատության եղանակով գաղտնի հափշտակության առանձին սահմանում նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքում, ինչի բացակայությունը գործնականում հանգեցնում է լուրջ խնդիրների, այդ թվում՝ անպատժելիության:

1. <u>Զգալի չափը գողության թե՞ հասարակ, թե՞ որակյալ հանցակազմի պարտադիր տարր նախատեսված լինելու առնչությամբ</u>

ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ քրեական օրենսդրությունում հափշտակության համար քրեական պատասխանատվությունը տարբերակվում է կախված հափշտակության չափից:

Հափշտակությունը, անկախ չափերից հանցագործություն է համարվում միայն ավազակության և կողոպուտի դեպքում, իսկ հափշտակության մյուս եղանակների,

այդ թվում՝ գողության համար քրեական պատասխանատվությունն առաջանում է սկսած **զգալի չափից**:

ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զգալի չափ է համարվում գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին՝ ՀՀ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից հինգհարյուրապատիկը չգերազանցող գումարը (արժեքը): Իսկ նույն օրենսգրքի 177-րդ հոդվածում գողությունը բնորոշվում է որպես ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակություն:

Մեջբերված քրեաիրավական դրույթների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված է գողության հիմնական (հասարակ) հանցակազմը, որում արտահայտված են հանցագործության տվյալ տեսակին բնորոշ հիմնական հատկանիշները: Մասնավորապես, դրանք են՝

1. ուրիշի գույք.
2. զգալի չափերով.
3. գաղտնի հափշտակություն:

Թե՞ տեսական, թե՞ գործնական աղբյուրներում առկա հիմնական մոտեցման համաձայն՝ հանցագործությունների որակման տեսանկյունից հիմնական հանցակազմի նշանակությունն այն է, որ դրա հատկանիշներն ընդգրկվում են հանցակազմի բոլոր դրսևորումների մեջ: Ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նկարագրված են գողության՝ համապատասխանաբար ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքներով զուգորդված հանցակազմերը, որոնք իրենց մեջ ներառելով գողության հիմնական հանցակազմի հատկանիշները (ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մաս)՝ նախատեսում են համապատասխան արարքը որակյալ դարձնող առանձին հատկանիշներ: Վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հասարակ, և նույն հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով նախատեսված որակյալ հանցակազմերը՝ միանշանակ է, որ արարքը ծանրացնող կամ առավել ծանրացնող հատկանիշով որակելու համար անհրաժեշտ է նախ պարզել, որ առկա են հասարակ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները: Այլ կերպ՝ եթե անձի արարքում բացակայում է գողության հասարակ (հիմնական) հանցակազմի

պարտադիր հատկանիշներից որևէ մեկը, ապա այն այլևս չի կարող որակվել ծանրացնող կամ առավել ծանրացնող հատկանիշով[1]:

Միանշանակ է, որ գողության եղանակով հափշտակություն կատարելով՝ հանցավորը ցանկանում է գույքը վերցնել այնպես, որ ոչ ոք այդ մասին չիմանա՝ գիտակցելով, որ այս դեպքում դիմադրության չի հանդիպի, կխուսափի կոնֆլիկտից, իսկ իր կատարածը չի բացահայտվի: Ուստի, անվիճելի է, որ գաղտնի հափշտակության այս եղանակն իր վտանգավորության հարցով զիջում է կողոպուտին և ավազակությանը:

Այդուհանդերձ, կրիմինոլոգիական իրողության հաշվառմամբ, հարկ է նկատել, որ գողության որոշ ծանրացնող հանգամանքներ օժտված են հանրային բարձր վտանգավորությամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է *բնակարան ապօրինի մուտք գործելով* կամ *կազմակերպված խմբի կողմից* գողություն կատարելուն: Թվարկված ծանրացնող և առանձնապես ծանրացնող հանգամանքների դեպքերում արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի համապատասխան մասով որակելու համար **գողոնի չափը չպետք է որոշիչ նշանակություն ունենա**:

Տեսադաշտից դուրս չպետք է թողնել նաև այն, որ գողության դեպքում առավելապես բարդ է հանցավորի դիտավորության ուղղվածության ապացուցումը: Այսպես, ենթադրենք, գողությունը կատարվել է բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով, սակայն հանցավորին, իր կամքից անկախ պատճառներով, չի հաջողվել գողանալ 5 հազար դրամը գերազանցող գումար: Նմանատիպ պայմաններում, եթե հնարավոր չլինի ապացուցել, որ հանցավորն իրականում մտադիր էր գողանալ, ասենք, 5 միլիոն դրամ (ինչը գործնականում բավական բարդ է), ապա վերջինս կենթարկվի ոչ թե քրեական, այլ վարչական պատասխանատվության: Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 53-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում մանր չափերով գողության, խարդախության, յուրացման, վատնման, համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով հափշտակության համար:

Մինչդեռ, ակնհայտ է, որ նման դեպքերն օժտված են հանրային բարձր վտանգավորությամբ, իսկ կրիմինոլոգիական իրողության անտեսումը հանգեցնում է

---

[1] Նման դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանն իր թիվ *ԱՐԱԴ/0025/01/15* որոշման մեջ:

հանցագործությունների տարբեր տեսակների համար նախատեսվող պատիժների անհամամասնությանը:

Հարցի առնչությամբ առավել կոշտ մոտեցում է դրսևորված ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում, ըստ որի՝ այդուհետ արարքը հափշտակության որևէ տեսակով որակելու համար հափշտակած գույքի չափը որոշիչ նշանակություն չի ունենալու:

Արժանահիշատակ է նաև, որ ինչպես նախկին մի շարք խորհրդային (օրինակ՝ *Ռուսաստանի Դաշնություն*[2], *Ուզբեկստան*[3], *Ղազախստան*[4]), այնպես էլ եվրոպական (*Հունգարիա*[5], *Չեխիա*[6], *Ֆրանսիա*[7], *Գերմանիա*[8], *Լատվիա*[9]) երկրներում գողության հասկացության մեջ չափը՝ որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ. նախատեսված չէ:

2. <u>Գրպանահատության եղանակով կամ տրանսպորտային միջոցից գաղտնի հափշտակության առանձին դրույթի բացակայության առնչությամբ</u>

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի կեսից ավելին ավտոտրանսպորտային միջոցներից և քաղաքացիների

---

2 http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/57b5c7b83fcd2cf40cabe2042f2d8f04ed6875ad/

3 http://lex.uz/pages/getpage.aspx?lact_id=111457

4 http://www.pavlodar.com/zakon/?dok=05552&uro=080189

5 http://www.parliament.am/library/Qreakan/Hungary.pdf

6 http://www.legislationline.org/download/action/download/id/6370/file/Czech%20Republic_CC_2009_am2011_en.pdf

7 http://www.legislationline.org/download/action/download/id/3316/file/France_Criminal%20Code%20updated%20on%2012-10-2005.pdf

8 http://www.legislationline.org/download/action/download/id/6115/file/Germany_CC_am2013_en.pdf

9 http://www.legislationline.org/download/action/download/id/4795/file/Latvia_CC_am2013_en.pdf

հագուստից, պայուսակից կամ նրանց մոտ գտնվող այլ առարկայից կատարված գողություններն են, որոնք կազմում են շուրջ 65%: Հատկանշական է, որ տրանսպորտային միջոցից կատարված գողության դեպքերը ևս տարեցտարի աճում են:

Ավելին, գրպանահատության՝ որպես գողության առանձին դրսևորման տարատեսակի ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածում նախատեսված չլինելը հանգեցնում է անպատժելիության հետևյալ պատճառներով՝

1. գրպանահատության եղանակով գաղտնի հափշտակության դեպքում գողոնի արժեքը, որպես կանոն, չի գերազանցում 50 հազար ՀՀ դրամը (արժեքը), իսկ այդ պայմաններում արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման.

2. քրեաիրավական պատասխանատվության ոլորտից դուրս են մնում բոլոր այն դեպքերը, երբ հանցավորին գրպանահատության միջոցով հաջողվել է գողանալ 5 հազար ՀՀ դրամը չգերազանցող գումար (արժեք):

Ինչ վերաբերում է բարձրացված հարցի առնչությամբ պրակտիկային և վիճակագրական տվյալներին, ապա դրանց ամփոփ ուսումնասիրությունը վկայում է, որ մեր օրերում գրպանահատությունը բավական տարածված երևույթ է:

Այսպես, 2014-2017 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով կատարված հանցագործությունների շարժընթացի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ 2014 թվականի ընթացքում գրպանահատության եղանակով կատարված գողության դեպքերը կազմում են գողության ընդհանուր թվի **24.2%,** 2015 թվականին՝ **36,6%,** 2016 թվականին՝ **39,4%,** 2017 թվականին՝ **34,1%:** Բացի այդ, լուրջ խնդիր է նաև այն, որ ներկայիս կարգավորումների շրջանակներում գրպանահատության ձևով գողություն կատարելը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով (մասնավոր մեղադրանքի գործ), ինչը ևս նպաստում է գողության դեպքերի աճին: Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ կատարած անձինք մասնավոր մեղադրանքի

դատավարական կարգավորումների արդյունքում հետաքննության կամ նախաքննության փուլում, որպես կանոն, չեն կալանավորվում և մնալով ազատության մեջ՝ կրկին կատարում են նույն հանցանքը:

Մասնավորապես, ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2014-2017 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով (առանց այլ հոդվածների կամ նույն հոդվածի այլ մասերի հետ համակցության) հետաքննության և նախաքննության մարմինների կողմից քրեական վարույթ է իրականացվել 5160 անձի նկատմամբ, որոնցից 4049-ի նկատմամբ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է[10], իսկ 776-ի նկատմամբ՝ կարճվել, որոնցից 309-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով (դիմողի բողոքի բացակայություն)[11]:

Ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ-տեղեկատու քարտադարանի տվյալների՝ 2014-2017 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով (առանց այլ հոդվածների կամ նույն հոդվածի այլ մասերի հետ համակցության) ՀՀ դատարանների կողմից դատապարտվել է ընդամենը 170 անձ:

Ավելին, առկա են դեպքեր, երբ միևնույն անձի նկատմամբ գողության (առավելապես կատարված գրպանահատության եղանակով) հատկանիշներով 2015-2018 (փետրվարի դրությամբ) թվականներին 121 անգամ քրեական վարույթ է իրականացվել, ընդ որում միայն 1 դեպքում է դատապարտվել տուգանքի, 1 դեպքում հարուցված քրեական գործը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով (կասկածյալի կամ մեղադրյալի հետ տուժողի հաշտություն), իսկ 119 դեպքում նախապատրաստված նյութերով քրեական գործերի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով (դիմողի բողոքի բացակայություն):

---

[10] Այդ թվում համաներման ակտի կիրառմամբ՝ 2 543, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի հիմքով՝ 1 469, վաղեմության ժամկետներն անցնելու փաստով՝ 18, անձի մահվան փաստով՝ 13 և այլն:

[11] Այդ թվում համաներման ակտի կիրառմամբ՝ 309, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածի 1-ին մասի հիմքով՝ 406, վաղեմության ժամկետներն անցնելու փաստով՝ 26, անձի մահվան փաստով՝ 8 և այլն

Խոսելով արտասահմանյան երկրների միջազգային փորձից, պետք է նկատել, որ դրա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրպանահատությունն այլ պետությունների քրեաիրավական կարգավորումներում ձևակերպված է կամ որպես առանձին հանցակազմ, կամ որպես գողության հանցակազմի ծանրացնող հանգամանք:

Այսպես, **Ռուսաստանի Դաշնության** քրեական օրենսգիրքը գրպանահատությունը դիտել է որպես գողություն հանցակազմի ծանրացնող հանգամանք՝ սահմանելով առավել ծանր պատիժ տուժողի մոտ գտնվող հագուստից, պայուսակից կամ այլ ուղեբեռից կատարված գողության համար (158-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ)[12]: Ավելին, ըստ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի՝ այն չի դասվում մասնավոր մեղադրանքի գործերի շարքին[13]: Նմանատիպ կարգավորումներ են նախատեսված նաև **Ուզբեկստանի** Հանրապետության քրեական (169-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ)[14] և քրեական դատավարության (325-րդ հոդված)[15] օրենսգրքերում: Նույնն է պատկերը նաև այլ երկրներում: Մասնավորապես, **Հունգարիայի Հանրապետության** քրեական օրենսգրքի 370[36] հոդվածի[16], **Լիտվայի Հանրապետության** քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի[17] համաձայն՝ առավել ծանր պատիժ է նախատեսվում գրպանահատությամբ կատարված գողության համար:

---

12 http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/57b5c7b83fcd2cf40cabe2042f2d8f04ed6875ad/

13 http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34481/b11b0b48526adb89008bc1b7d5fb33d40be80012/#dst1643

14 http://lex.uz/pages/getpage.aspx?lact_id=111457

15 http://fmc.uz/legisl.php?id=k_ug_pr

16 http://www.parliament.am/library/Qreakan/Hungary.pdf

http://www.legislationline.org/download/action/download/id/5619/file/HUngary_Criminal_Code_of_2012_en.pdf

17 http://www.legislationline.org/download/action/download/id/4302/file/Lithuania_CC_am2010_en.pdf

Առաջարկվող կարգավորման բնույթը

Վերոշարադրյալ խնդիրների կարգավորման, պրակտիկայում առկա իրավիճակի բարելավման նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի առնչությամբ առաջարկվում է հետևյալ հայեցակարգը՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել այնպես, որ **«զգալի չափը»** լինի ոչ թե գողության հասկացության, այլ միայն գողության հասարակ հանցակազմի պարտադիր տարր:

2. Հիմք ընդունելով գողության՝ *բնակարան ապօրինի մուտք գործելով* և *կազմակերպված խմբի կողմից* ծանրացնող հանգամանքների հանրային բարձր վտանգավորությունը՝ այսուհետ արարքը դրանցով որակելու դեպքում **«զգալի չափը»** առհասարակ որոշիչ նշանակություն չի ունենա:

3. Որպես գողության ծանրացնող հանգամանք ավելացվել են այն դեպքերը, երբ գողությունը կատարվել է անձի կողմից կրվող հագուստից, պայուսակից կամ անձի մոտ գտնվող այլ առարկայից: Նման լուծման պայմաններում գրպանահատությունը կդիտարկվի որպես հանրային մեղադրանքի գործ, ինչպես նաև դրա վրա չի տարածվի «զգալի չափով» կատարված լինելու պայմանը:

3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

4.Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման պարագայում կբարձրանա գողության տարբեր տարատեսակների դեմ պայքարի արդյունավետությունը, դրանց համար նշանակվող պատիժները կլինեն համարժեք, ինչպես նաև կվերանա ստեղծված անպատժելիության մթնոլորտը: